

ՊԱՍՏՆԱԳՐԱԿ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ՌԻԱԼԻՏ ԺՈՄՊԼԱԹ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՎԵՐՁԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ



Նախագահ գործադիր Լահուտ երկի Պաստնայի մէջ ընդունեց ընկերվար Յաւարտի մասին կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ռալֆ Ժոմպլաթը, որուն այցելութիւնը նախագահական պալատ կ'իյնար ներքին քաղաքական մթնոլորտի բարելաման ու ամրապնդման ծիրէն ներս:

Հանդիպումին քննարկուեցան տեղական եւ շրջանային իրադարձութիւններն ու զարգացումները եւ լիբանանեան բեմին վրայ ազգային միասնականութեան ամրապնդման ծառայող հեռանկարները:

Նախագահ Լահուտի այցելեց աշխատանքի նախարար Ալի Քանո: Քննարկուեց արտակարգ դարձան աշխատանքի նախարարութեան առնչուող հարցեր, ինչպէս նաեւ ընկերվար Ապահովագրութեան Ազգային Մնուէկի կապուած հարցեր:

Նախագահական պալատի հիւրերը եղան նաեւ Լիբանանեան կարմիր խաչի նախագահ Սելիմ Լիոն եւ սահմանադրական խորհուրդի անդամ Էմիլ Պրոֆաքի:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ շնորհաւորական հեռագիր մը յղեց Զինաստանի նորընտիր նախագահ Հու Ճինթաուի:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐՔԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԵՍԸ ՅՈՒՋՈՂ ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿԵՑ ՏԱՐՔԵՐ ԱՆՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրի երկի ընդունեց Լիբանանեան ժողովրդավաճարութիւն Կուսակցութեան նախագահ, պետական նախարար Թալալ Արայանը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային պարզացումները:

Պրըրի ընդունեց նաեւ Մարոնիներու Լիկայի մէկ պատուիրակութիւնը, լիկայի նախագահ Հարէս Ենիայի գլխաւորութեամբ եւ Ամալ շարժումի փոխ նախագահ, երեսփոխան Ալյուպ Հըմայէտի եւ Ալի Հըմայէտի ներկայութեամբ:

Հանդիպումին ետք Ենիայ իր կատարած յայտարարութիւններուն մէջ նշեց, որ ամբողջ աշխարհը մտահոգող ամերիկեան պատերազմը Իրաքի դէմ արդէն իսկ որոշուած է, եւ աւելցուց, որ ոչ մէկը կրնայ ըսել, թէ ի՞նչ տարողութեամբ եւ ի՞նչպէս կրնայ արտախաչ այդ պատերազմը:

Ենիայ անդրադառնալով ներքին լիբանանեան կացութեան շեշտեց, որ կառավարութիւնը պէտք է օգտագործէ երկրին մէջ տիրող դրական մթնոլորտը եւ նախաձեռնէ քաղաքական բոլոր կողմերը եւ ուժերը ընդգրկող ազգային ընդարձակ երկխօսութեան:

Պրըրիի այցելութեան եղան նաեւ տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտի, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպլի եւ Լիբանանի մէջ Եմէսի դեսպան Անիտ Ապտալա Պաշա:

«ՍՕՍԻ ՌԻՖԱԼԵՍ» ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍՏԱԿԱՆ ԳՈՆՏԻՆ

Ուրախ առիթով մը՝ Աշոտ եւ Լայլ Բագրատունի 75,000 Լ. ը.

ՄԱՀԱՋԴ

Տիկին Զարուհի Ճէրիտեան Տէր եւ տիկին Յարութիւն Թորոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ռուբեն Ճէրիտեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յովիկ Նիկողոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Փայրիք Տէր Աբրահամեան Տէր եւ տիկին Գրիգոր Պալթայեան եւ զաւակը Տէր եւ տիկին Սահակ Աճէմեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Աճէմեան եւ զաւակունք Օրդ. Տիգրանուհի Պազըրճեան Պալթայեան ընտանիք Թորոսեան ընտանիք Գրիգորեան ընտանիք Նիկողոսեան ընտանիք Տէր Աբրահամեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ԳԵՂՈՐԳ ԾԵՐԻՏԵԱՆԻ (Ծնեալ՝ 1927Իճ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 18 Մարտ 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: Յուղարկութեան քուականը պիտի յայտարարուի հետագային:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՇԵՐՔԷ, ԹԵ ԼԻԲԱՆԱՆ ՍՊԱՌՆԱԼԻԵՆԵՐ ՍՏԱՑԱԾ Է ԻՍՐԱՅԷԼԵՆ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանացիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ երկի հերքեց, թէ Լիբանան սպառնալիքներ եւ պուշապուշներ ստացած է Իսրայէլէն՝ հարաւային սահմանին վրայ կացութեան խախտումին առնչութեամբ:

Համմուտ շեշտեց, որ նման սպառնալիքներ պետք է ուղղուին Իսրայէլի, որ միշտ ինք նախախարձակ կ'ըլլայ եւ պատճառ կը դառնայ սահմանային խախտումներու: Համմուտ վերահաստատեց, որ Լիբանան կառչած կը մնայ իր հողային եւ ջրային իրաւունքներուն եւ պանոնք հիմ կը նկատէ հարաւի մէջ կացութիւնը բարելայելու նպատակով ի գործ դրած իր բոլոր ջանքերուն ընթացքին:



Համմուտ երկի հեռախոսային հաղորդակցութեան մը ընթացքին, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի հետ քննարկեց 24էն 25 Մարտին կայանալիք արաբ արտաքին գործոց նախարարներու խորհուրդի ժողովին մասնաւորութիւնները: Միւս կողմէ, Համմուտ երկի ընդունեց «Դիմադրութեան Հաւատարմութիւն» երեսփոխանական պլոքի անդամ երեսփոխան Մոհամէտ Եադին, որուն հետ քննարկեց շրջանային հարցեր:

Անդրադառնալով Լիբանանի դէմ իսրայէլեան յարձակումներու «պաշտօնական» վերսկսման, Եադի յայտնեց, որ ըստ երեւոյթի Միացեալ Նահանգներ Իսրայէլը պուշապուշած են նման քայլի դիմելու եւ աւելցուց, որ նման պարագայի մը Լիբանան պատրաստ է խիստ դիմադրողականութեամբ սաստել թշնամին:

ԵԹԷ ԱՐԱՐԱԿԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱՐ, ԱՅՍՕՐ ՏԱՐՔԵՐ Կ ԸԼԼԱՐ ԱՐԱԲՆԵՐՈՒՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ Կ'ԸՍԵ ՓՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՍԱՍ ՖԱՐԵՍ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս երկի գոհունակութիւն յայտնեց Լիբանանի քաղաքական ներքին մթնոլորտին նկատմամբ՝ եւ գոհունակեց շրջանային յարուած կացութիւններէն եւ վստահեցնեց:

Ֆարէս աւելցուց, որ Լիբանանի ժողովրդային եւ պաշտօնական կեցողութեան սկիզբէն ի վեր եղած է պատերազմին դէմ, միշտ յենելով խաղաղ լուծման տարբերակին՝ հիմնուած միջազգային որոշումներու վրայ:

Ֆարէս ցաւ յայտնեց, որ Իրաքի դէմ պատերազմին գոծով ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը, Եւրոպական Միութիւնը, ՕՅԱՆը, ինչպէս նաեւ արաբական «միասնականութիւնը» ձախողեցան իրենց որոշումներուն եւ կեցողութեան ներքին մէջ: Ան աւելցուց, որ եթէ արաբական իսկական միասնականութիւն մը գոյութիւն ունենար, ներկայիս արաբներուն կացութիւնը տարբեր կ'ըլլար:

Միւս կողմէ, Ֆարէս երկի նախագահեց նախարարական երկու յանձնարարութեան Կարգադրութեան ժողովներուն: Առաջինը՝ բնական

կազմի արաբական խորհուրդի համաձայնագրի մը ուսումնասիրութեան նախարարական յանձնարարութեան, որուն մաս կը կազմեն ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մահմուտ Ապտալ Համմուտը, Ելեմուտքի նախարար Ֆուադ Սիհորա, հաղորդակցութեան հարցերու նախարար Ժան Լուի Քրոտահի եւ պետական նախարար Պահիթ Թապարա:

Երկրորդը՝ պաշտօնական տեսքով արձակուրդներու ճշդումին յատուկ յանձնարարութեան, որուն մաս կազմեցին մշակութի նախարար Ղասսան Սայամէ, գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ եւ պետական նախարար Պահիթ Թապարա եւ Փիեռ Հըլլ: Ժողովէն բացակայեցաւ ընկերային հարցերու պետական նախարար Ասատ Տրապ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Մամուկ Վարդանեանի մահուան քառասունօրեան առիթով, տեղի տրուած Սալիպա Մարտիրոսեան եւ զաւակունք 50,000 Լ. ը. Թշնցմոս Բոյնին:

● Պերճուհի Պեռնեանի եւ Ժանօ Օհանեսեանի մահուան առիթով, տեղի տրուած Ման Պոստոյեան 60,000 Լ. ը.՝ Ա. Նշան Մայր եկեղեցու վերանորոգութեան:

ԿՈՒՉՈՒԻ

● Վարպետ ձեւող մը. փորձառու ըլլալը պայման: 25ԷՆ 50 տարեկան, դիմել՝ հեռ. 05-464414 եւ 05-462179:

ԿՈՒՉՈՒԻ

● Խոհարար կամ խոհարարուհի մը՝ հայկական զանազան ճաշեր եփելու համար: Դիմել հեռ. 01 - 255330 եւ 01 - 244330:

ՇԱԽՈՒ ԵՆ

● 2 յարկաբաժնիներ, Ժեհարուի հիւանդանոցի մօտ, իւրաքանչիւրը՝ 2 մնջասնեակ, հիւրասենեակ եւ յարակից մասեր, գետնախարկ եւ Ա. յարկ, մատչելի գին: Հեռ.՝ 03-610854:

ՆՇՄԱՐ

Ո՛Ր, ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՐ, ԶԿՐՑԱՔ ՀԱՍՈՉԵԼ

Ամբողջ աշխարհը երկի անխտիր հետեւեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի պատկերասփռուած պատգամին:

Բնականաբար կը սպասուէր, որ թեքասացի ղեկավարը փորձէ առաւելագոյնս արդարացնել ինքզինք՝ Իրաքը հարուածելու համոզիչ պատճառներ ներկայացնելով: Այդպէս չեղաւ սակայն: Նոյնիսկ այս իմաստով ան ձախողեցաւ մարդոց համակրանքը շահիլ:

Ինչու: Պարզ է: Երբ այսուհետեւ «դասականացած» ու քիչէ դարձած լուրնագներով կը ներկայանա հանրութեան, պարզ է, որ չընդունին պաշտպանած թէպէրդ: Օրինակ, երբ խնդրոյ առարկայ երկրին ղեկավարը բռնատէր կ'անուանես, երբ տուեալ երկրին վարչակարգը տապալելու կը ձգտես յանուն ժողովրդավարութեան, պարզապէս կը դառնաս անհեթեթ, որովհետեւ շատուց անցած է այդ հնամենի ամբոխավարութեան դարը: Քսանմէկերորդ դարու մարդը չիւնի փաստեր, շոշափելի տուեալներ կը պահանջէ որեւէ հարցի գծով համոզուելու համար: 25-րդ դրոյ դիտարկութեան դարն ենք եւ գիտական ուղեղը միայն ու միայն հաստատ տուեալ կ'ընդունի եւ ոչ՝ օդին մէջ նետուած խօսքեր, բանաձեւուած քիչէ նախադասութիւններ: Այս մէկը մանաւանդ ամերիկացիները ինք յայտնեցին, որովհետեւ գիտութեան ռազմավարներն մեկն է ինք անվիճելիօրէն:

Աւելին: Ծիծաղելի հոն է, երբ աշխարհի հյօրագոյն ուժին թիւ մէկ ղեկավարը ամենայն միամտութեամբ դիմացի կողմին, իմա՝ Իրաքի ժողովուրդին կոչ կ'ուղղէ չփճացնել իր նախախորհրդերը, տէր կանգնիլ անոնց: Ինքզինք մատնելու ասկէ աւելի լաւ փաստ կրնայ ըլլալ: Իրաքեան քարիւղին ձեռք զննելու մարմաքը ա՛յսքան աժա՛ն կը դարձնէ եղեր հյօր պետութեան մը գերագոյն ղեկավարին հանգամանքը...

Այս բոլորէն բացի տակաւին կայ գլոխ գործոցը: Ճորճ Պուշ ամենայն ինքնավստահութեամբ յայտարարեց, թէ Իրաք այսպէս ըսած արգիլելով կ'ընդունի, զորս պահած է եւ որոնք մեծ վտանգ կը սպառնան ամբողջ աշխարհին... Ի՞նչպէս կարելի է բացատրել այս ինքնավստահութիւնը, մանաւանդ որ ՄԱԿի պէնքի քննիչները երկար հետախուզութեանէ ետք պաշտօնապէս յայտարարեցին, թէ Իրաք այդպիսի պէնքեր չունի, իսկ «Մուսուտ 2» հրթիռներն ալ փճացուց Նոյնիքն քննիչներուն հսկողութեամբ:

Պատասխանը յստակ է ու մեկին: Ճորճ Պուշ այդքան ինքնավստահ է, պարզապէս որովհետեւ իր ղեկավարած պետութիւնը օրին Պաղտատի անձամբ տրամադրած է այդ պէնքերը՝ Իրանի դէմ պատերազմի մը համար, բայց կ'երելի այն ժամանակ այդ պէնքերը վտանգաւոր չէին, սակայն յանկարծ մէկ օրէն միւսը այսօր անոնք դարձան այնքան մը վտանգաւոր, որ նոյնիսկ վտանգ կը սպառնան եղեր ամբողջ աշխարհին...

Ո՛Ր, պարո՛ն նախագահ, երբեք համոզիչ չեն ձեր բացատրութիւնները:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԳԵՂՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գ. Մ. Գ. Մրցանակի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2003ի համար Գ. Մ. Գ. Մրցանակի ներկայացնելու շրջանը:

Գ. Մ. Գ. Մրցանակ կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ, կամ գիրքի ձեւի տակ ցարդ լոյս չտեսած գործեր առ ի գնահատում եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ հայ մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պետք է դատակազմին հասան ըլլան ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2003:

Առաքուած գործերը պետք է ըլլան մեքենագրուած եւ երբ օրինակով: Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Արտաւազ արք. Թրքեան, Զարեհ արք. Ազնաւորեան, տիար Գեղորդ Գանտաշարեան (ատենապետ), տիար Պեպօ Սիմոնեան (ատենապետ), տիար Արմենակ Եղիայեան, տիար Պողոս Սնապեան եւ տիար Ժիրայր Դանիլեան:

Դատակազմին հասցէ.- Armenian Catholicosate of Cilicia P. O. Box 70317 Antelias - Lebanon E - Mail: cathcil@cathcil.org Fax: +961 - 4 - 419 724

Դիւան Գ. Մ. Գ. Մ.ի Դատակազմ ԾԱՆՈԹ.- Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերադարձուիր:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԻՍԼԱՄ - ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՈԳԵԻՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

17 Մարտ 2003ին, ԵՈՒՆԵՍԲՕԻ արահին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի քրիստոնէայ - իսլամ հոգեւոր պետերու խորհրդաժողովը, որ նպատակ ունէր կարելի բոլոր միջոցներով վորակցութիւն յայտնել հակապատերազմեան քաղաքականութեան: Հանդիպման ներկայ գտնուեցան հոգեւոր պետերու ներկայացուցիչները: Խորհրդաժողովին ընթացքին յանուն Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի խօսք առաւ Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան: Առաջնորդ սրբապանը ներկայացուց նորին սրբութեան տեսակետը՝ խաղաղ միջոցներով լուծում բերելու միջապագային ընտանիքը տագնապեցնող սոյն հարցին, յանուն արդարութեան եւ խաղաղութեան հաստատման եւ պզգրու միջոց խաղաղ գոյակցութեան պահպանումին:

Իրաքի անիրաւուած ժողովուրդի դատին ի նպաստ վորակցութեան կոչ մըն էր սոյն համախմբումը, որ դատապարտեց Իրաքի դէմ Ամերիկայի կողմէ շղթայապետուած պատերազմի նախապատրաստութիւն ու անոր հետեւեալները:

Իր խօսքի աւարտին, առաջնորդ սրբապանը կոչ ուղղեց ներկայներուն՝ միացեալ ջանքերով պայքարելու Միջին Արեւելքի շուրջ նիւթուող նոր կացութիւններու ստեղծման ծրագիրներուն դէմ: Նոյն առիթով, սրբապան հայրը կոչ ուղղեց նաեւ վորավիզ կանգնելու պաղեստինեան արդար դատին եւ պաղեստինցի տառապող ժողովուրդին:

Ժողովը աւարտին հրապարակեց նաեւ հաղորդագրութիւն մը, որ կը մերժէ պատերազմի տրամաբանութիւնը, ինչպէս նաեւ կը մերժէ կրօնական դիմագիծ տալ սոյն հակամարտութեան: Հաղորդագրութեան մէջ քրիստոնէական ամերիկեան ծառայապաշտական քաղաքականութիւն կը նկատեն այժմու կացութիւնը, իսկ իսլամներ կը մերժեն նոր խաչակրութիւն որակել պատերազմական ընտանիքը Արեւմուտքի կողմէ: Հաղորդագրութիւնը կ'ողջունէ քրիստոնէայ եկեղեցիներու հակապատերազմեան միախառն կեցուածքը:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԼԾՈՒԱԾ...

Շարունակուած Ա. Էջէն

քրիստոնէային, առանց խորութեան:

բ) Վեհափառ Հայրապետը նաեւ խորհրդակցութիւններ ունեցաւ Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդի ընդհանուր քարտուղարին հետ: Խորհրդակցութիւնները ընդգրկեցին Միջին Արեւելքի եկեղեցիներու հոգեւոր պետերու հանդիպման ու յայտարարութեան կարելիութիւնը, ինչպէս նաեւ մարդասիրական օգնութեան բերելիք Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին մասնակցութեան կապուած հարցերը:

գ) Վեհափառ Հայրապետը հակառակ հեռաձայնային հաղորդակցութեան գիտարարութեան, յարողեցաւ կապ պահել Պաղեստին Ազգային առաջնորդարանին հետ եւ ուզեց իմանալ Իրաքի հայութեան դիմագրուած գիտարարութիւններուն մասին: Միաժամանակ յայտնեց, որ իր կարելիք պիտի ընէ, որ կարիքաւոր հայ ընտանիքներ կարենան օգտուել յառաջիկային կատարուելիք մարդասիրական օժանդակութեան:

դ) Հեռաձայնային կապով վեհափառ Հայրապետը խօսեցաւ նաեւ Ամմանի առաջնորդ վահան արք. Թոմաթիանի հետ եւ տեղեակ դարձաւ ընդհանրապէս երկրին ու հայ համայնքին կացութեան: Արամ վեհափառ սրբազանին թելադրեց յատուկ ուշադրութիւն դարձնել Ամմանի կատարուելիք միջկեղեցական օժանդակութեան, որպէսզի առաւել չսփոփուիր իրաքէն եկող հայ գաղթականներ օգտուէին մարդասիրական նպաստներէն:

ե) Վեհափառ Հայրապետը նաեւ կապ պահեց Քուէյթի եւ Շոքի Թեմի կաթողիկոսական փոխանորդ Կորիւն Արք. Պապեանի հետ: Ցայտեմբ, որ վերջերս Թեմը ունեցաւ իր պատգամաւորական փոփոխութիւն կաթողիկոսական փոխանորդ սրբազանը եւ Ազգային Մարմինները մօտէն կը հետեւին զարգացող կացութեան: Ազգային առաջնորդարանը բաց է մնալուն կերպով եւ մեր բոլոր կառույցները բնական ընթացքով կը գործեն:

զ) Վեհափառ Հայրապետը նաեւ հեռաձայնային խօսակցութիւն ունեցաւ Թեհրանի հայոց առաջնորդ, Սեպուհ եպս. Սարգիսեանին հետ: Վախկա, որ պատերազմի պարագային մեծ թիւով գաղթականներ մուտք գործեն Իրան: Վեհափառ Հայրապետը թելադրեց սրբազանին, որ յատուկ ուշադրութեան առարկայ դառնան հայ գաղթականները: Առաջնորդ սրբազանը յայտնեց, որ այս ուղղութեամբ արդէն թեմական մարմիններուն հետ խորհրդակցութեան մէջ է եւ անհրաժեշտ քայլերու պիտի լինէ:

ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄ ՄԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Ուելլըմ Ուալըս ըսաւ, որ պատերազմի ժամը կը մօտենայ, որովհետեւ ամէն մարդ գիտէ, թէ Սատամ պիտի չենթարկուի վերջնագրին եւ քարտուղարի ջրնորէ: Ուալըս դիտել տուաւ սակայն, որ հակառակ յարձակող ուժերուն գերակայութեան իրաքեան բանակը վստահաբար զօրաւոր դիմադրականութիւն պիտի ցուցաբերէ:

Իրաք, իր կարգին, կոչ ուղղեց արաբական աշխարհին՝ արտակարգ միջոցառումներու ձեռնարկելու եւ արգիլելու ամերիկեան յարձակումը: Արտաքին գործոց նախարար Նաթի Սապրի իր կողմ ուղղեց Արաբական Լիգային, որուն ընդհանուր քարտուղար Ամր Մուսան մետասանբորդ պահանջ ջնջեց Պաղեստին այցելութիւնը: Սապրի դիտել տուաւ, որ Լիգան չի կրնար եւ պէտք է ընդունի անկախ երկրի մը ուղղուած վերջնագիրը եւ պատերազմի ծրագիրը, որ դարձած է անխուսափելի:

Արաբական Լիգան յայտարարած էր, որ կը մերժէ Պուշի վերջնագիրը, շեշտելով, որ Ապահովութեան Խորհուրդի թիւ 1441 բանաձեւը ժամանակ չի սահմանէ Իրաքի ապագինման համար: Լիգայի բանբերը ցաւ յայտնեց, որ այսպիսի յայտարարութիւն մը կատարուի՝ հարուածելու համար դիւանագիտական բոլոր ճիգերը, տագնապը խաղաղ միջոցներով լուծելու:

ՊԼԵՐ ԿԱՐԵՒՈՒԹԻՒՆ ՉԻ ՏԱՐ ՀՐԱՃԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ



Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր, որուն դահլիճէն երեք նախարարներ հրաժարեցան, իրեւ բողոք Իրաքի հանդէպ որդեգրած քաղաքականութեան դէմ, երէկ անդրադուրեց մնաց եւ խորհրդարանին մէջ պաշտպանեց պատերազմի մը զօրավիզ կանգնող իր կեցուածքը:

Աւելի ուշ, Բրիտանիոյ խորհրդարանը, որ տասը ժամուկան երկարատեւ եւ տաք բանավէճերով նիստ մը գումարեց, 396 թեր, 217 դէմ քուէներով կանաչ լոյս տուաւ Պլէրի: Խորհրդարանէն դուրս սակայն, բողոքող ժողովուրդը զայրացած՝ փորձեց նոյնիսկ ներխուժել խորհրդարան, սակայն բանակն ու ոստիկանութիւնը մնացին կացութեան տէրը, հակառակ ընդվզումի բռնու ալիքին:

Իր խօսքին մէջ Պլէր ըսաւ, որ եթէ հիմա խիստ ու վճռական միջոցառումներ չորդեգրուին Սատամի դէմ, այլ երկիրներ պիտի չարշալերուին ու իրեքը ալ հաւաքական քանդուի գէնքեր պատրաստեն: Պլէր շեշտեց, որ եթէ Սատամ Հիւսէյնի վարչակարգը քիմիական, կենսաքանական եւ կորիզային գէնքեր է «մաքրագործելու» միակ միջոցը գիտարարող գործողութիւնն է, ուրեքն պէտք է զօրավիզ կանգնել անոր: Ան ակեցուց, որ իրաքեան տագնապին արդիւնքին հիման վրայ պիտի գծուին ՄԱԿի, Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու յառաջիկայ տարիներու փոխ յարաբերութիւնները աշխարհ մնացեալ երկիրներուն հետ: Պլէր ցաւ յայտնեց նաեւ, որ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք հաստատ մնացած է Ապահովութեան Խորհուրդի որեւէ որոշում վերջի ենթարկելու կեցուածքին վրայ:


Պլէրի կառավարութեանէն երեք նախարարներ Ռոպին Բուր, Ֆիլիպ Հանթ եւ Ճոն Տենըմ հրաժարեցան:


ՀԱՎԱՊԱՏԵՐԱՉ ԱՎԱՍԸ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՅՈՒՍԱՅ ԽԱՂԱՂ ԼՈՒԹՈՒՄ ՄԸ ՉՏԵԼ


Իրաքի դէմ պատերազմը մերժող պետութիւնները, թէեւ կ'անդրադառնան, թէ Պուշի յայտարարած վերջնագրին լոյսին տակ պատերազմը անխուսափելի դարձած է, բայցեւայնպէս տակաւին կը շարունակեն դիւանագիտական ճիգերը, յուսալով որ կարելի պիտի ըլլայ կացութիւնը փրկել:

Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք վերստին ըսաւ, որ Իրաքի դէմ ուժի գործածութիւնը արդարացուցիչ որեւէ հիմնաւորում չունի: Շիրաք զգուշացուց Ուաշինկթոնը միջազգային ընտանիքին կամքը նստեսելէ եւ միակողմանի որոշում մը տակ: Շիրաք շեշտեց, որ Իրաք այս անգործունին սպառնալիք մը չի ներկայացնէր: Ան ընդունեց որ Իրաքի ապագինումը անհրաժեշտ է, իսկ վարչակարգի փոփոխութիւնը՝ «բաղձալի»: Շիրաք դիտել տուաւ, որ Ուաշինկթոնը միջազգային ընտանիքին կամքը չի ներկայացնէր: Ան ըսաւ նաեւ, որ տագնապին դիտարարական լուծում տալը նախընթաց մը պիտի դառնայ եւ ապագային առիթ պիտի չտրուի տագնապներուն խաղաղ լուծում ապահովելու ճիգերուն:






Չինաստանի նախագահ Հու Ճինթաօ երէկ հեռաձայնային կապեր հաստատեց Շիրաքի ու Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ՝ կոչ ուղղելով շարունակելու դիւանագիտական ճիգերը, նոյնիսկ եթէ անյոյս նկատուին անոնք: Հու ըսաւ, որ խաղաղութեան դուռը պէտք է փակուի: Ան շեշտեց, որ Իրաքի տագնապը լուծելու միակ ձեւը ՄԱԿի շրջափ







ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի արտասանած ճառը եւ իրաքեան պատերազմին առնչութեամբ ամբողջ աշխարհին սարած լարում վիճակը կը գրաւեն 18 Մարտի լիբանանեան օրաթերթերուն առաջին էջերը:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են պաղեստինցիներուն դէմ գործադրուող խրախնդարեան բռնարարները եւ պաղեստինցի վարչապետին իրաւասութիւններուն հարցը:

«Նահաբ» գրած է, թէ Իրաք բուն կերպով կը մերժէ Սատամի հեռացման ամերիկեան պահանջը, իսկ ամերիկեան զաղունի սպասարկութիւնները անպակասեցնելու հարցին վերաբերեալ կը իրաւասութեան հարցը:

«Նահաբ» գրած է, թէ Իրաք բուն կերպով կը մերժէ Սատամի հեռացման ամերիկեան պահանջը, իսկ ամերիկեան զաղունի սպասարկութիւնները անպակասեցնելու հարցին վերաբերեալ կը իրաւասութեան հարցը:

«Մաֆի» նշած է, թէ Քուէթի Անան Ապահովութեան Խորհուրդի պահանջները կը հեռացնէ Պաղեստին, իսկ Թուրքիա կ'որոշէ պատերազմին մասնակցիլ: Պուշի Սատամին կը պահանջէ, որ 48 ժամուկան ընթացքին հեռանայ Պաղեստին կամ դիւանագրաւէ երկրին քանդումը:

«Մուսթաքալ» ի համաձայն, Պուշի իրաքեան բանակը կը իրաւասութեան երկրէն: Կարմիր սուլը կը պատրաստուի մէկ միլիոն անձի հոգաւորութեան: «Լիուս» ի համաձայն, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ
(ՀԵՀՈՍ)**

**ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՅ ՀԱՄԵԼՍԱՐԱՆԱԿԸ
ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԵՌԹԵԱՆ**

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՉՐՈՅՑ

Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՏ

* Վեհափառ հայրապետը պիտի խօսի «Երիտասարդութիւնը մեր մարտահրաւրէրներու դիմաց» նիւթին շուրջ: Ապա վեհափառ հայրապետը պիտի պատասխանէ ներկայներու հարցումներուն:

* Տեղի կ'ունենայ Կիրակի, 23 Մարտ 2003, առաւօտեան ժամը 11:30ին, վեհարանի դահլիճին մէջ:

* Կը իրաւիւրեց մեր համալսարանական ուսանողները եւ մեր երիտասարդ երիտասարդուհիները՝ ներկայ գտնուելու սոյն հաւաքին եւ լսելու վեհափառ հայրապետին պատգամը:

**Ս. ՅԱՎՈՔ ԵԿԵՂԵՅԻ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ**

ԳԵՐՇ.Տ. ԶԱՐԵՀ ԱՐԳ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

Նիւթ՝
Աստուածաշունչի քարգմանութիւն

**Չորեքշաբթի, 19 Մարտ 2003ին
առաւօտեան ժամը 9:30ին:**

**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՅԱՎՈՔ ԵԿԵՂԵՅԻՈՅ**

վտանգին աստիճանը եւ 100 միլիառ տոլար կը պահանջէ պատերազմը ֆինանսաւորելու համար:

Ըստ «Տիար» ի, Պուշի պատերազմի գծով իր վերջնական որոշումը տուաւ եւ Սատամի պայմանաւանկոտալ Սատամ Հիւսէյնի լքելու իրաքը, իսկ Պաղեստին կը մերժէ Պուշի պահանջին գործադրութիւնը, գրած է օրաթերթը:

Ըստ Թերթին, Անան ՄԱԿի պէքի քննիչներուն կը հրահանգէ հեռանալ Պաղեստին, իսկ Թուրքիա պատրաստակամութիւն կը յայտարարէ, որ Թուրքիա պահանջին միջոցով կը իրաւասութեան հարցը:

«Բիֆաի Արապի» ի համաձայն, Ուաշինկթոնը կը կոչէ իր որոշումը վախճալով խաղաղութիւնն ու միասնականութիւնը: Թերթը գրած է նաեւ, թէ բրիտանացի նախարար Ռոպին Քուէթ կը իրաւասութեան հարցը իրաւասութեան հարցը:

«Մաֆի» նշած է, թէ Քուէթի Անան Ապահովութեան Խորհուրդի պահանջները կը հեռացնէ Պաղեստին, իսկ Թուրքիա կ'որոշէ պատերազմին մասնակցիլ:

«Մուսթաքալ» ի համաձայն, Պուշի իրաքեան բանակը կը իրաւասութեան երկրէն: Կարմիր սուլը կը պատրաստուի մէկ միլիոն անձի հոգաւորութեան: «Լիուս» ի համաձայն, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին

«Պալեստինեան իշխանութեան առնչութեամբ «Նահաբ» գրած է, թէ պաղեստինեան գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններուն միջոց կան տարակարծութիւններ՝ պաղեստինեան իշխանութեան վարչապետին իրաւասութիւններուն շուրջ:



Ըստ «Լիուս» ի, Սուսէյրաթի եւ Պէյթ Լահիայի դէմ ունեցուցած քննիչներու ընթացքին 12 պաղեստինցիներ նախատակուեցան, իսկ պաղեստինեան օրէնսդիր մարմինը կը ձախողեցնէ Արաֆաթի դերակատարութիւնը ամրապնդելու միտող բարեփոխումները:

«Մաֆի» նշած է, թէ Իսրայել Իրաքի դէմ պատերազմի մթնոլորտը կը շահագործէ Կապի մէջ նոր քարտէր շղթայապետելով:

Ըստ «Մուսթաքալ» ի, Արաֆաթ կը իրաւասութեան հարցը իրաւասութեան հարցը:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՇՆՈՐՀՄՈՐԱԳԻՐ

Յարգելի՛ պրն. Սեպուհ Յովսեփյանի՝ Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչությունը կը շնորհաւորէ Լիբանանի մեծ յաջողութիւնը՝ ստանալով իրաւունքը հիւրընկալելու Ֆրանսախօս Երկիրներու Կապմակերպութեան մարզական ճող խաղերը:

Այս առիթով մեր միութիւնը պօրակցութիւն կը յայտնէ՝ ձեռնարարութեան եւ մեր ամբողջ կարողականութիւնը կը դնենք ձեր տրամադրութեան տակ:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՖՈՒԹՊՈԼ

Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ 2-1 ՅԱՂԹԱԿԱՆ

Լեռնայիրանանի նահանգէն ներս տեղի ունեցող Լիբանանի ֆուտբոլի Դ. դասակարգի ախոյեանութեան իր կատարած առաջին մրցումին, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի խումբը (Ե. խմբակ), անցեալ Կիրակի օր 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սաֆա Շուրիի խումբը: Հ.Մ.Ը.Մ.ի երկու կողմերն ալ նշանակեց եղիչ թուսեան:

2րդ հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ յառաջիկայ Կիրակի, 23 Մարտին Քֆարիմայի դաշտին վրայ, ժամը 12:30ին կը ճակատի նահատ Ենպիպէ Շուրիի խումբին դէմ:

ԵՆ. ՊԻ. ԷՅ.

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՏԵՐՊԻՆ ԱՒԱՐՏԵՑԱԻ ԼԷՅՔԸՐԶԻ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ

Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ տեղւոյն հրկու խումբերուն՝ Լէյքըրզի եւ Քլիֆորզի միջև ճակատումը, որ վերջ

դտաւ առաջինին յաղթանակով՝ 102-85: Լէյքըրզ, որ արձանագրեց եղանակի իր 38րդ յաղթանակը, այժմ կը գրաւէ ինքնուրուական գոտիի (Արեւմտեան շրջան) երրորդ դիրքը՝ Սաքրամենթո Բիւնկի (առաջին) եւ Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզի (երկրորդ) ետին: Լէյքըրզի արձանագրած այս յաղթանակին մէջ իր կարեւոր ռափինը ունեցաւ Շաքլի Օնիլ, որ նշանակեց 42 կէտ: Անոր խմբակից Բոպէ Պրայնընը նշանակեց 26 կէտ: Քլիֆորզի ամենէն աւելի շատ կէտեր նշանակողը (15 կէտ) հանդիսացաւ Անտոն Միլըր:

Ինտիանափոլիսի մէջ, Ինտիանա Փէյլըրզ 95-88 արդիւնքով պարտութեան մը կրեց իր հիւրէն՝ Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզէն: Հակառակ անոր որ Փէյլըրզի մարզիկ Վեյն Օնիլ նշանակեց 31 կէտ եւ 12 ռիպաւնտ, սակայն անոր կազմը կրեց եղանակի իր 28րդ պարտութիւնը: Յարգ 39 յաղթանակ արձանագրած Փէյլըրզ այժմ կը գրաւէ Կեզրոնական գոտիի (Արեւելեան շրջան) 2րդ դիրքը:

Երէկուան երրորդ եւ վերջին մրցումը վերջ գտաւ յետ երկարձգման, որուն ընթացքին Ֆէօնիքս Սանզ 95-91 արդիւնքով պարտութեան մատնեց Թորոնթօ Ռեփլորզը: Սանզի մարզիկ Շոն Մարիլըն նշանակեց 30 կէտ եւ 10 ռիպաւնտ:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը. Նիւ ձըրզի Նեթս - Պոսթը Սեյթըք Տիբրոյիք Փիւքընգ - Ուաշինգթըն Ուիլքընս Ֆիլատելֆիա Սիթըրզ - Մայնի Վիք Մեմֆիս Կիքիլզ - Միլենտոպա Վոլվոզ Աթլանթա Հոքս - Շիրակօ Պուլզ Քլիվլենտ Քաւալիրզ - Տալաս Մալքըրիք Նիւ Եորք Նիքս - Սան Անթոնիօ Սփըրզ Տենզլըր Նակթէք - Եուքս Ճէյ Կոլորա Սթըյք Ուորիըրզ - Սաքրամենթօ Քիկկ Վիլքընս Ռոքեթք - Սիթըլ Սուփըրսոնիքս

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.

ՎԱՂԸ՝ ԼԻՎԸՐՓՈՒԼ ԿԸ ՀԻՐԸՆԿԱԼԷ ՍԵԼԹԻՔԸ

Եու. Է. ԷՖ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքին քառորդ աւարտականի դարձի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան վաղը՝ Հինգշաբթի, վստահաբար հետաքրքրական ճակատումը տեղի պիտի ունենայ «Էնթուրթ» մէջ, ուր Լիվըրփուլ պիտի հիւրընկալէ Սելթիքը: Երթին անոնք 1 - 1 արդիւնքով հաւասարութեան մը արձանագրած էին իրարու հետ:

Լիվըրփուլի մարզիչ Ժերար Զուլիէ ըսաւ, որ այս մրցումէն պիտի բացակայի սենեկակցի յառաջապահ Հանի Տրուֆ, եու. Է. ԷՖ. Ա.ին կողմէ երկու մրցումով կախակալուած ըլլալով: Ան երթին, Կլաքոյի մէջ ոչ մարզավայել կեցուածք մը ունեցած էր, երբ թքած էր Սելթիքի համակիրներուն: Անոր հակումը այդ արարքին համար, անկէ զեղչեց անոր երկու շաբաթականը:

Եթէ Լիվըրփուլ յաղտի ապահովել աւարտականին իր տոմար, ան դաշտ պիտի ներկայանայ Սելթիքէն պիտի բացակայի Քրիս Սաթըն (վիրաւոր):

ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ԵՒ ԵՈՒՎԵՆԹՈՒՄ ԸԱՍԱՆ ՔԱՌՈՐԴ ԱԲԱՐՏԱԿԱՆԻՆ

«Չէմփիրնչ Լիկ»ի հանգրուանի մրցումներուն, երէկ գիշեր տեղի ունեցան չորս ճակատումներ, որոնց արդիւնքներուն լոյսին տակ յստակացան Ա. Սէ. Միլանի եւ Մանչեսթըր Եունայթըրի հետ քառորդ աւարտականին իրենց տոմար ապահովող մնացեալ երկու կազմերը:

Գ. խմբակին երկրորդ դիրքը գրաւող եւ տիտղոսակիր Ռեալ Մատրիտ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Լոքոմոթիվ Մոսկուան, անցաւ յաջորդ հանգրուան, մինչ Պորուսիա Տորթմունտ հակառակ իր արձանագրած յաղթանակին՝ Ա. Սէ. Միլանի դէմ (1-0), դուրս մնաց մրցաշարքէն: Ռոնալտո նշանակեց Ռեալ Մատրիտի կողմ (35րդ), իսկ Եան Բոլլըր՝ Տորթմունտի կողմ (80րդ): Նշենք, թէ 19 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով է, որ քառորդ աւարտականի մրցումները տեղի պիտի ունենան առանց գերմանական խումբի:

Դ. խմբակէն իրտոմար ապահովեց Եու-

վէնթուս, հակառակ անոր որ անիկա 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Պալէն: Տեփորթիօ Քորուսա թէ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մանչեսթըր Եունայթըրը, սակայն Պալի հետ դուրս մնաց մրցաշարքէն:



Ռոնալտո

Ստորեւ՝ Գ. եւ Դ. խմբակներուն վերջնական դասաւորումը.

Գ. ԽՄԱԿ	ԿԷՏ
1.- Ա. Սէ. Միլան	12 (5 - 4)
2.- Ռեալ Մատրիտ	11 (9 - 6)
3.- Պորուսիա Տորթմունտ	10 (8 - 5)
4.- Լոքոմոթիվ Մոսկուա	1 (3 - 10)

Դ. ԽՄԱԿ	ԿԷՏ
1.- Մանչեսթըր Եունայթըր	13 (11 - 5)
2.- Եուվէնթուս	7 (11 - 11)
3.- Պալ	7 (5 - 10)
4.- Տեփորթիօ Քորուսա	7 (7 - 8)

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Ա. ԽՄԱԿ Պայեր Լեյքըրզըն - Ինթըր Միլան Նիւքեարլ - Պարսելոնա

Բ. ԽՄԱԿ Ա. Էս. Ռոմա - Այաքս Ամսթերտամ Վալենսիա - Արսենալ

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը, շաբաթակից իր գումարած ժողովին, վաւերացուցեց, անցեալ շաբաթակցի տեղի ունեցած Ա. դասակարգի ախոյեանութեան 16րդ հանգրուանի, ինչպէս նաեւ Բ. դասակարգի ախոյեանութեան 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, վաւերացուցնաւ Բ. դասակարգի ախոյեանութեան 16րդ հանգրուանին յետաձգուած երեք մրցումները, որոնց արդիւնքներն Ա. Մ. Մ. 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Նահտա Պար Էլիասի հետ, Իսլամ Պըրժ Շիմալի 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Թատամոն Նապաթիէն եւ վերջապէս չըրրիէ Մաժտալ Այնճար 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռիատա Ուալ Ատապը:

Անցեալ շաբաթակցի մրցումները, իրենց երրորդ դիրքին քարտը ստացած կարգ մը մարզիկներ (Բ. դասակարգ), մէկական մրցումով կը կախակալուին ֆետերասիոնին կողմէ: Այդ մարզիկներն են. Տէնի Նապըր (Հ. Մ. Մ.), Մոհամէտ Պատըր (Ռա-

իւն), Ալի Իսա (Իթիմաի), Հըսէյն Հուշու (Ալի Սալտա), Հասան Նուպիա (Չըրիէ Մաժտալ Այնճար), Մահմուտ Մոհամէտ (Ռիատա Ուալ Ատապ), Հըսէյն Սալէի (Չըրիէ Մաժտալ Այնճար): Իսկ Ա. դասակարգին մաս կազմող եւ մէկական մրցումով կախակալուած մարզիկներն են. Ամին Ալիու (Ահտ), Ղասսան Շուէյի (Սաֆա), Իսլամ Ալի եւ Ֆատըլ Նամ (Պըրժ), Ուսամա Հայտար եւ Բասմ Ատտար (Թատամոն Ուր), Հըսէյն Հասուն (Ալի Սալտա) եւ Լուիս Ֆետիս (Չապապ Սա-

Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ախոյեանութեան յետաձգուած այդ երեք մրցումներէն ետք, այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Գ.	Կ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Հ. Մ. Մ.	13	3	0	41	8 42
2.- Հ. Մ. Մ.	10	4	3	29	24 34
3.- Իսլամ	8	7	2	28	16 31
4.- Ռիատա	8	2	7	32	29 26
5.- Շապապ	6	4	7	15	18 22
6.- Իթիմաի	6	4	7	20	26 22
7.- Ռիատա	4	8	5	22	22 20
8.- Նապաթիէ	5	4	8	22	29 19
9.- Նահտա	5	2	9	17	23 17
10.- Սալտա	4	4	9	20	29 16
11.- Չըրիէ	3	4	10	16	28 13
12.- Մահապպա	3	4	10	17	33 13

Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ դասաւորումը այժմ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Գ.	Կ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Ահտ	11	3	2	27	14 36
2.- Օլիմփիք	11	2	3	30	9 35
3.- Նըթմէ	10	3	3	26	13 33
4.- Անտար	7	7	2	27	15 28
5.- Ռ. Սուր	6	7	3	22	17 25
6.- Մաժէ	5	5	6	22	22 20
7.- Սաֆա	5	4	7	17	21 19
8.- Մահէլ	2	7	7	18	26 13
9.- Մապարա	2	6	8	14	28 12
10.- Ալի	3	3	9	9	24 12
11.- Պըրժ	5	2	9	13	24 11
12.- Սալամ	2	5	9	19	31 11

ՓՈՒԿ ՓՈՒԿ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔԸ

Այսօր, Չորեքշաբթի, Մոն Լա Սալի մէջ կը սկսի փինկ փոնկի գարնանային մրցաշարքը, որ կը մկատուի 2003ին փինկ փոնկի տարուան առաջին պաշտօնական մրցաշարքը: Այս մրցաշարքէն սկսեալ, մարզիկներ կը սկսին 2003ի իրենց կէտերը հաւաքել: Նշենք, թէ մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն 110 տղաք եւ 19 աղջիկներ: Հ. Մ. Մ. կը մասնակցի հինգ մարզիկով: Աղջկանց մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Լիզա Պարիքեան, Նոել Բէյշեան եւ Լարա Քէլպաշեան, իսկ տղոց մրցաշարքին՝ Ռազմիկ Շեմեմեան եւ Մալքեթ Թատիլ: Նշենք, թէ անոնք հինգս ալ Ա. հանգրուանին մրցում չունին կատարելիք եւ մրցաշարքին կը սկսուի Բ. հանգրուանէն:

ՌԵՐԱՍԸ, 21 ՄԱՐՏ ԴԱՇՏ Ռիփոլի Ռիփոլի Քաղ.ի դաշտ

ՇԱՐԱՍԸ, 22 ՄԱՐՏ Ռիատա Ուալ Ատապ - Հ. Մ. Մ. Ռիփոլի Պ. Համուտ

ԿԻՐԱԿԻ, 23 ՄԱՐՏ Ահի Սալտա - Թատամոն Նապաթիէ Սուր Հըրիէ - Նահտա Պար Էլիաս Խիարա

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ 17րդ հանգրուան. ՇԱՐԱՍԸ, 22 ՄԱՐՏ Շապապ Մահէլ - Օլիմփիք Անտար - Մապարա ԿԻՐԱԿԻ, 23 ՄԱՐՏ Սալամ - Թատամոն Սուր Սաժէ - Սաֆա Ահտ - Պըրժ Նըթմէ - Ալի Ալի

ԿԻՐԱԿԻ, 23 ՄԱՐՏ Սալամ - Թատամոն Սուր Սաժէ - Սաֆա Ահտ - Պըրժ Նըթմէ - Ալի Ալի

